ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր վարչություն

Գլխավոր քարտուղար

Գենդերային գործողությունների պլան III (GAP III) - 2021-2025թթ.

Երկրի մակարդակով իրականացման ծրագիր - Հայաստան

2020թ. նոյեմբերի 25-ին Եվրոպական միության քոլեջի կողմից Գենդերային գործողությունների պլան III-ի (GAP III)՝ գենդերային հավասարության և կանանց զորեղացման՝ ԵՄ արտաքին գործողությունների հավակնոտ օրակարգի ընդունմամբ ԵՄ-ն վերահաստատում է ԵՄ արտաքին գործողությունների բոլոր մակարդակներում ու բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ու կանանց զորեղացման կենտրոնական լինելու փաստը:

Այս GAP III երկրի մակարդակով իրականացման ծրագիրը (ԵՄԻԾ), որը հիմնված է 2021-2027 թթ. բազմամյա ինդիկատիվ ծրագրի (ԲԻԾ), Մարդու իրավունքների ոլորտում երկրի՝ 2021-2024 թթ. ռազմավարության և Հայաստանի Հանրապետության՝ 2021թ. գենդերային բնութագրի (ԳԲ) վրա[1], ընդգրկում է ինչպես ծրագրային, այնպես էլ քաղաքական պարտավորություններ և կոնկրետ գործողություններ և նախաձեռնություններ է առաջարկում Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարության խթանման համար:

ԵՄԻԾ-ի պատրաստման գործընթացում խորհրդատվություն է ստացվել հետևյալ մարմիններից՝ Արդարադատության նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԵՄ անդամ երկրներ, կանանց կազմակերպություններ և քաղաքացիական հասարակության այլ դերակատարներ:

1. **Երկրում գենդերային հավասարության և կանանց զորեղացման՝ ԵՄ գործողությունների համատեքստը**

Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանը որոշակի առաջընթաց է գրանցել Գենդերային խզվածքի համաշխարհային ինդեքսում, որը ամեն տարի հաշվարկվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից: 2016թ. գտնվելով 102-րդ տեղում՝ 2019 և

[1] ԵՄԻԾ-ում առկա բոլոր հղումները կարելի է գտնել Հայաստանի գենդերային բնութագրում՝ https://euneighbourseast.eu/news-and-stories/publications/country-gender-profile-of-the-republic-of-armenia/

2020թթ. Հայաստանը բարձրացել է մինչև 98-րդ տեղը: Այնուամենայնիվ, 2021թ. զեկույցի տվյալներով՝ Հայաստանը գենդերային խզվածքի համաշխարհային ինդեքսում 114-րդ տեղում է:[2] Հիմնական փոփոխությունները տեղի են ունեցել տնտեսական մասնակցության և հնարավորությունների ենթաինդեքսում (2020թ. 78-րդ տեղից մինչև 2021թ. 96-րդ տեղ):[3] Սա կարելի է բացատրել 2020 թվականի COVID-19 համավարակի ծանր հետևանքներով: Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի վարկանիշում Հայաստանը 26 երկրների շարքում 25-րդ տեղում է:[4]

Հայաստանի կառավարությունը գենդերային անհավասարությանն անդրադառնում է մի շարք քաղաքական գործիքների միջոցով. i) Գենդերային հավասարության՝ 2019-2023 թթ. թթ. ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր, ii) ՄԱԿ-ի ԱԽ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն»1325 բանաձևի 2019-2021թթ. դրույթների իրականացման ազգային ծրագիր, iii) «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, iv) «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք:

Գենդերային հավասարության ազգային մեխանիզմներն են.

- ՀՀ վարչապետին առընթեր «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով» խորհուրդը,
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) «Հավասար հնարավորությունների ապահովման» վարչությունը,
- Յուրաքանչյուր մարզպետարանում կազմված գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովները:

2018թ. ի վեր ԱՍՀՆ-ն դարձել է գենդերային հավասարության քաղաքականության ձևավորման ու իրականացման և գենդերային հավասարության հիմնախնդրի համալիր մոտեցման (մեյնսթրիմինգի) խթանման հիմնական պետական դերակատարը:

2019թ. ստեղծվել է Կանանց հարցերով խորհուրդը՝ ՀՀ փոխվարչապետի նախագահությամբ: Խորհուրդը ազգային մեխանիզմ է, որն աջակցում է կանանց ներգրավմանը ժողովրդավարական գործընթացներում և ապահովում Հայաստանում տղամարդկանց և կանանց միջև հավասար իրավունքներ և հավասար հնարավորություններ:[5] Այնուամենայնիվ, ՔՈՎԻԴ-19 համավարակի և պատերազմի պատճառով Խորհուրդը շատ աշխատանք չի կատարել:

Ներկայիս ԵՄԻԾ-ը հիմնված է 2021-2027 թթ. բազմամյա ինդիկատիվ ծրագրի (ԲԻԾ), Մարդու իրավունքների ոլորտում երկրի՝ 2021-2024թթթթ. ռազմավարության, Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) և քաղաքացիական հասարակության ճանապարհային քարտեզի ու Գենդերային գործողությունների ծրագիր III-ի (GAP III) վրա:

[2] Գենդերային խզվածքի համաշխարհային ինդեքս 2021 https://www.statista.com/statistics/244387/the-global-gender-gap-index/
[3] Նույն տեղում
[4] Նույն տեղում
[5] http://www.irtek.am/views/act.aspx?aid=102587

Հայաստանի հետ ԵՄ համագործակցության ԲԻԾ-ի շրջանակներում ֆինանսավորվող առաջնահերթ ուղղություններն են.

- **Դիմակայուն , կայուն և ինտեգրված տնտեսություն**

Ակնկալվող հիմնական գենդերազգայուն արդյունքները.

- ***Տղամարդկանց և կանանց տնտեսական ակտիվության միջև խզվածքի նվազում՝*** հատկապես 25-34 տարեկան կանանց դեպքում: Ներկայումս տնտեսական ակտիվության ամենամեծ խզվածքը հատկապես այս տարիքային խմբում է նկատվում՝ համընկնելով կանանց՝ երեխա ունենալու հետ: Հետևաբար, կանանց զբաղվածությունը հասել է իր գագաթնակետին 40-54 տարեկան տարիքային խմբում, ինչը նշանակում է, որ կանայք աշխատանքային շուկայից դուրս են մնացել իրենց առավել աշխատունակ տարիներին, նրանք ունեն ավելի քիչ հմտություններ և աշխատանքային փորձ՝ համեմատած նույն տարիքային խմբի տղամարդկանց հետ, և գործատուները չեն ցանկանում աշխատանքի ընդունել 40 տարեկանից բարձր կանանց:
- Հայաստանում՝ հատկապես գյուղական վայրերում, **նախադպրոցական հաստատությունների հաճախելիության ավելացում**: Ներկայումս գյուղական բնակավայրերում նախադպրոցական հաստատությունների հաճախելիության մակարդակը կազմում է շուրջ 17,2%:
- ***Կին գործատուների և բիզնեսի սեփականատերերի տոկոսի ավելացում:*** Հայաստանում գենդերային զգալի խզվածք է նկատվում հօգուտ տղամարդ գործատուների, քանի որ գործատուների 86%-ը տղամարդիկ են: Մյուս կողմից, երբ խոսքը վերաբերում է կին ձեռնարկատերերին, նրանք քիչ են ներկայացված բիզնեսի սեփականատերերի շրջանում, իսկ կանանց պատկանող ձեռնարկությունները ավելի փոքր են և ավելի անբարենպաստ, քան տղամարդկանց պատկանող ձեռնարկությունները, քանի դեռ խոսքը վերաբերում է վարկերի, ռեսուրսների և ակտիվների հասանելիությանը:
- ***Ապահովել մարգինալացված համայնքների կանանց և աղջիկների մասնակցությունը աշխատաշուկային:***
- ***Վարձատրության գենդերային խզվածքի նվազում:*** 2020 թվականին Հայաստանում վարձատրության գենդերային խզվածքը կազմել է 34,7%, իսկ ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ կանայք 20%-ով ավելի քիչ են վաստակում, քան տղամարդիկ: Երեք գործոն ազդում է վարձատրության գենդերային տարբերության վրա՝ կանանց տարիքը, աշխարհագրությունը (մարզերում ծնվածներ և մայրաքաղաքում ծնվածների միջև տարբերություն) և կրթական մակարդակը:

- **Հաշվետու հաստատություններ, օրենքի գերակայություն և անվտանգություն**

Ակնկալվող հիմնական գենդերազգայուն արդյունքները.

- Կառավարության բոլոր ճյուղերում՝ ազգային և ենթազգային մակարդակներում, ***որոշումների կայացման գործում գենդերային հավասարության ապահովում***: Այսօր հանրապետական մակարդակով ընդամենը մեկ կին նախարար կա, տեղական մակարդակով՝ Հայաստանի 46 քաղաքային համայնքներից միայն 1-ում է քաղաքապետը կին: Մարզերի համայնքապետերից և մարզպետներից ոչ մեկը կին չէ:
- ***Ստամբուլյան կոնվենցիայի վավերացում***: Հայաստանի կողմից Ստամբուլյան կոնվենցիայի վավերացումը կանխվել է հակագենդերային ընդդիմադիր ուժեղ շարժման կողմից:
- ***Օրենքում և պրակտիկայում գենդերային խտրականության հասցեագրում:*** Հայաստանում դատավորների միայն 26,6%-ն է կին: Ավելին՝ դատական իշխանության բարձրագույն օղակներում կին դատավորների տոկոսը նվազում է:
- ***Սեռական և ընտանեկան բռնության վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարձրացում:*** COVID-19 համավարակի ընթացքում տեղական ՀԿ-ները գրանցել են ընտանեկան բռնության տագնապալի աճ. տարեկան գրանցվում է ընտանեկան բռնության ավելի քան 700 դեպք, իսկ կանանց կազմակերպությունների թեժ գծերը 2021թ. շուրջ 3000 զանգ են ստացել:
- ***Պետական քաղաքականություն մշակողների***՝ ներառյալ իրավապահ և դատական մարմինների՝ սեռական և գենդերային բռնության ոլորտում ***գենդերազգայուն մոտեցումներ***՝ գենդերազգայուն քաղաքականությունը բարելավելու նպատակով: Մինչ օրս Հայաստանի քրեական օրենսգիրքը չի նախատեսում որևէ կոնկրետ ուղեցույց ընտանեկան բռնություն պարունակող դեպքերը որակելու կամ պատժելու համար: Իրավապահները և դատավորները չունեն համապատասխան պատրաստվածություն:

- **Շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունություն**

Ակնկալվող հիմնական գենդերազգայուն արդյունքները.

- ***Գյուղատնտեսական ապրանքների արտադրության մեջ կանանց ներգրավվածություն***, նրանց համար աշխատանքային անվտանգ և պաշտպանված միջավայր: Ներկայումս կանայք չափազանց շատ են ներկայացված այս ոլորտում՝ ոչ ֆորմալ ձևով, ինչը խաթարում է նրանց կողմից աշխատողների իրավունքների և պաշտպանվածության լիարժեք վայելումը:
- ***Բնակլիմայական խնդիրների հասցեագրման*** գործընթացում կանանց տեսլականի և փորձառության կիրառում:
- ***Կանանց առավել մեծ հասանելիություն բնական ռեսուրսներին ու կոմունալ ծառայություններին:***
- Կանանց և տղամարդկանց ***կենսապայմանների բարելավում***՝ նաև խմելու և ոռոգման ջրի հասանելիության բարելավման միջոցով:
- ***Նոր կանաչ (էկո) տնտեսական զարգացում և դրա հետ կապված աշխատատեղեր***՝ հավասարապես հասանելի կանանց և տղամարդկանց համար:

- ***Ներառական կանաչ (էկո) տնտեսության և կանաչ (էկո) աճի և աշխատատեղերի խթանման շրջանակների*** ստեղծում:
- ***Առողջապահական համակարգի կայունության բարձրացում՝ հանրային առողջապահական համակարգերի բարելավման միջոցով:***
- ***Տղամարդկանց և կանանց՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար հանրային առողջության հասանելիության բարձրացում:*** Ֆիզիկական խոչընդոտները և խտրականությունը խանգարում են հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին օգտվել իրենց սեռական և վերարտադրողական առողջության իրավունքներից: Բժշկական անձնակազմի կողմնակալ վերաբերմունքը և գիտելիքների ու հմտությունների բացակայությունը ազդում են հատկապես հաշմանդամություն ունեցող կանանց ու աղջիկների և ՄԻԱՎ-ով ապրող կանանց վրա՝ հատկապես Հայաստանի գյուղական շրջաններում:

- **Դիմակայուն թվային առաջընթաց**

Ակնկալվող հիմնական գենդերազգայուն արդյունքները.

- Նորարարության, գիտության և տեխնոլոգիայի ոլորտում ներգրավված կանանց և աղջիկների տոկոսի ավելացում: Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում (ՏՀՏ) կանանց ներգրավվածությունը կազմում է 30%: Այնուամենայնիվ, ՏՀՏ ոլորտի առաջատարների միայն 11%-ն են կանայք, իսկ վարձատրության գենդերային խզվածքն այս ոլորտում զգալի է:
- ***Թվային վերափոխման քաղաքականության միջավայրի և ենթակառուցվածքների բարելավում***, գենդերային, քաղաք-գյուղ թվային անհավասարությունների նվազեցման միջոցով թվային անջրպետի կրճատում:

- **Դիմակայուն , արդար և ներառական հասարակություն**

Ակնկալվող հիմնական գենդերազգայուն արդյունքները.

- ***Մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանություն և խթանում, գենդերային հավասարության և հակախտրականության*** ուժեղացում:
- ***Փաստահենք, ներառական երկխոսության և քաղաքականությունների*** մշակում և ընդունում: Հայաստանում գործող քաղաքականությունները ներառականության առումով բացեր ունեն:
- ***Հանրային ծառայությունների արդար հասանելիության և սոցիալ-տնտեսական ինտեգրման*** միջոցով սոցիալական ներառականության բարելավում: Կանայք Հայաստանում դեռևս երկարաժամկետ գործազուրկ բնակչության մեջ մեծամասնություն են կազմում (53%), իսկ կանանց 60%-ն աշխատում է այն ոլորտներում, որոնք առանձնապես շահութաբեր չեն՝ ներառյալ գյուղատնտեսությունը, կրթությունը և առողջապահությունը:
- ***Բնակչության տարբեր խմբերի, այդ թվում՝ անապահով և խոցելի խմբերի՝ հանրային կրթության, սոցիալական ծառայությունների, տեղեկատվության, մշակույթի և զբաղվածության հասանելիության բարելավում:*** Հայաստանում մարգինալացված և խոցելի խմբերի կանանց համար հիմնական գինեկոլոգիական ծառայության բացակայությունը դեռևս խնդիր է: Այս տեսակի ծառայություններին խոցելի խմբերի հասանելիությունը բարելավելու անհրաժեշտության ևս մեկ

օրինակ է եզդիական համայնքներում առկա գենդերային կողմնակալությունը: Իսկապես, 40,000–60,000 եզդիներից միայն շատ քիչ թվով եզդի աղջիկներ են համալսարան հաճախում:

- ***Կանանց քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների շարունակական զարգացմանն ուղղված*** աջակցության միջոցառումների ապահովում:

2. Նպատակներն ու ընտրված թեմատիկ ոլորտները

Հայաստանում գենդերային հավասարության և կանանց զորեղացման ԵՄ գործողությունների պլանի ընդհանուր նպատակներն են.

1. ապահովել բոլոր տեսակի գենդերային բռնություններից ազատություն,
2. ամրապնդել սոցիալ-տնտեսական իրավունքները և զորեղացնել կանանց ու աղջիկներին՝ առաջնորդության մեջ հավասար մասնակցության և կրթության ոլորտում գենդերային հավասարության հասնելու համար,
3. ինտեգրել «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը և
4. խթանել էկո և թվային զարգացման մեջ գենդերային հավասարությունը:

Հատուկ ուշադրություն է դարձվելու մարգինալացված համայնքների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող աղջիկների և կանանց գենդերային հատուկ կարիքներին:

Ընդհանուր նպատակները, որոնք համապատասխանում են գենդերային հավասարության և կանանց զորեղացման վերաբերյալ GAP III-ի ռազմավարական քաղաքականության վեց ոլորտներից չորսին, կլուծվեն 2021-2027թթ. ԲԻԾ-ից բխող գործողություններով և կխթանվեն քաղաքական և քաղաքականության փաստաթղթերի երկխոսություններում:

Ազատություն գենդերային բռնության բոլոր ձևերից

Ընդհանուր նպատակին հասնելու համար, այն է՝ գենդերային բռնությունից զերծ կյանք կանանց ու աղջիկների համար, ԵՄ հայաստանյան պատվիրակությունը կենտրոնանալու է հետևյալ հատուկ նպատակների վրա.

- Պետական ներկայացուցիչների կարողությունների զարգացման ծրագրերի խթանում՝ բարձրացնելու նրանց գենդերազգայունությունը և գենդերային բռնության դեմ պայքարի հմտությունները:
- Աջակցություն դատական բարեփոխումներին, որոնք ուղղված են ընտանեկան և սեռական բռնության ցանկացած ձևի քրեականացմանն ուղղված հատուկ ընթացակարգերի ապահովմանը:
- «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի կիրառման խթանում:
- Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման խթանում:
- Հաշմանդամություն ունեցող կանանց, հատկապես հաստատություններում ապրող կանանց նկատմամբ գենդերային բռնության դեմ պայքարի արդյունավետ իրավական, քաղաքական և գործնական միջոցառումների իրականացման աջակցություն:

- Գենդերային կարծրատիպերի, խտրական սոցիալական նորմերի և դպրոցի հետ կապված գենդերային բռնության դեմ պայքարի կրթական արդյունավետ միջոցների ներդրման հեշտացում:
- Աջակցություն գենդերային բռնության՝ ներառյալ օնլայն սեքսիզմի դեմ պայքարող կանանց քաղաքացիական հասարակություններին:

Սոցիալ-տնտեսական իրավունքների ուժեղացում, կանանց ու աղջիկների զորեղացում

Կանանց, տղամարդկանց, աղջիկներին և տղաներին ազատ ու հավասարապես իրենց տնտեսական, աշխատանքային և սոցիալական իրավունքներից օգտվելու հնարավորություն տվող նպատակներին հասնելու համար ԵՄ հայաստանյան գրասենյակը հետապնդելու է հետևյալ հատուկ նպատակները.

- Աջակցություն անհավասարությունների նվազմանը և կայունությանն ու մարդկային զարգացմանը, մասնավորապես՝ ուղղված կանանց, երիտասարդներին և մարգինալացված խմբերին:
- Համավարակի և հետպատերազմական վերականգնման ու տնտեսական աճի խթանում:
- Կանանց սեփականություն հանդիսացող բիզնեսի հետագա զարգացման աջակցություն և կանանց ձեռներեցության ամրապնդման համար միջավայրի ստեղծում:
- Աջակցություն մարդկային կապիտալին և կրթության արդիականացմանը, ներառյալ աշխատանքի ավելի որակյալ հմտությունների ձեռքբերում, աղջիկներին ու տղաներին, կանանց ու տղամարդկանց՝ ներառյալ մարգինալ խմբերի մարդկանց նախապատրաստում աշխատաշուկայի մարտահրավերներին և հնարավորություններին:
- Առաջնահերթություն տալ ազատ աճին և աշխատատեղերին (առավելագույն շեշտը դնելով շրջակա միջավայրի և նորարարության վրա) և նպատակային վերականգնման նախաձեռնություններին Հայաստանի հարավում:
- Աջակցություն ավելի ուժեղ գենդերազգայուն կրթական համակարգերի կառուցմանը՝ խթանելու գենդերային հավասարությունը և ապահովելու ավելի արդար կրթական արդյունքներ աղջիկների և տղաների համար՝ ապահով և առողջ ուսումնական միջավայրերի, ուսուցիչների հավաքագրման, վերապատրաստման և մասնագիտական զարգացման, ուսումնական ծրագրերի և ուսումնական նյութերի, ծնողների և համայնքների հետ աշխատանքի միջոցով:
- Հայաստանի մայրաքաղաքում և մարզերում սեռական համապարփակ կրթության հասանելիության բարելավման աջակցություն:
- Աջակցություն Հայաստանի կառավարությանը՝ կանանց համար ավելի ճկուն աշխատանք-կյանք հավասարակշռության քաղաքականությունների ներդրման և խրախուսման հարցում՝ հաշվի առնելով ժամանակի գենդերային անհամաչափ բաշխվածությունը, տրամադրելով երեխաների խնամքի և ընտանեկան աջակցության ծառայություններ:
- Աջակցություն Հայաստանի կառավարությանը՝ իրագործելու աշխատանքային, ընտանեկան և անձնական կյանքի ներդաշնակեցման, վերարտադրողական աշխատանքի հավասարաչափ բաշխման և ծնողական պարտականությունների կատարմանը տղամարդկանց ակտիվ մասնակցության վերաբերյալ իրազեկման արշավներ:

«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» (ԿԽԱ) օրակարգի ներդրում

Հակամարտություններից տուժած կանանց և աղջիկների իրավունքների պաշտպանվածության, հակամարտությունների կանխարգելման, լուծման, խաղաղության հաստատման և հետկոնֆլիկտային կառավարման գործում կանանց և աղջիկների մասնակցությունն ու ներկայացվածությունը ապահովելու նպատակին հասնելու համար ԵՄ հայաստանյան պատվիրակությունը հետամուտ է լինելու հետևյալ նպատակներին.

- Անվտանգության ամրապնդում, հետպատերազմական վերականգնում և վստահության կառուցում՝ ներառյալ սահմանների կառավարում, բռնի ծայրահեղականությանը հակազդում, հակամարտությունների վերափոխում:
- Բազմակողմանիության, գլոբալ համերաշխության և աշխարհաքաղաքական լարվածության թուլացմանն ուղղված ջանքերի ավելացում՝ դրանով իսկ նպաստելով խաղաղությանն ու անվտանգությանը:
- Աջակցություն Հայաստանի կառավարության կողմից ընդունված՝ ՄԱԿ-ի 1325 գործողությունների ազգային ծրագրի իրականացմանը՝ ներառյալ Ադրբեջանին սահմանակից Հայաստանի շրջաններում «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի տեղայնացումը:
- Տավուշի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների վստահության ամրապնդման, հոգեբանական և վերականգնողական ծրագրերի իրականացման աջակցություն:
- Աջակցություն խաղաղաշինության և մարդասիրական գործողություններում կանանց առաջնորդության բարձրացմանը և Հայաստանում «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի արդյունավետ իրականացմանը միտված ծրագրերի իրականացմանը:
- Աջակցություն սահմանամերձ շրջաններում կանանց և աղջիկների իրավունքների խախտման մոնիտորինգին:

Կանաչ (էկո) և թվային փոխակերպումների մարտահրավերների և հնարավորությունների օգտագործում

Կանանց կողմից շրջակա միջավայրի պահպանման և կլիմայի փոփոխության քաղաքականության և գործողությունների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացների վրա ազդեցություն գործելու ընդհանուր նպատակին հասնելու համար ԵՄ պատվիրակությունը հետապնդելու է հետևյալ հատուկ նպատակները.

- Կանանց և աղջիկների մասնակցության և առաջնորդության խթանում՝ ապահովելու համար կլիմայի մեղմացմանն ու հարմարվողականությանը, աղետների ռիսկի նվազեցմանը և բնական ռեսուրսների ներառական և կայուն կառավարմանն ուղղված գենդերազգայուն ռազմավարություններ:
- Կանաչ (էկո) անցումային ոլորտներում կանանց ցանցերի աջակցություն, ինչպիսիք են անտառների կայուն կառավարումը, գյուղատնտեսությունը և էներգետիկան:
- Աշխատանքի և ձեռներեցության համար թվային կրթության և հմտությունների խթանում՝ միաժամանակ անդրադառնալով գենդերային նորմերին և կարծրատիպերին, որոնք կանանց և աղջիկներին ետ են պահում տեխնոլոգիայից:

- Աջակցություն թվային ոլորտի կին նորարարներին և ձեռներեցներին բազմաթիվ արդյունաբերական էկոհամակարգերում՝ ստեղծելու ներառական թվային տնտեսություն՝ նպատակ ունենալով փակելու թվային ոլորտի գենդերային խզվածքը:
- Աջակցություն անվտանգ և մատչելի էլեկտրոնային կապի բարելավմանը և ներառական թվային հմտությունների զարգացմանը՝ հատկապես անապահով խմբերի՝ նվազեցնելով գենդերային, քաղաք-գյուղ անհավասարությունները թվային ոլորտում:
- Աղջիկների կրթության մեջ ներդրումների աջակցություն՝ հասնելու հավասարության կրթության և ուսուցման բոլոր ձևերում՝ ներառյալ գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն և մաթեմատիկա, թվային գրագիտություն և հմտություններ, ինչպես նաև՝ տեխնիկական և մասնագիտական կրթություն ու ուսուցում:

GAP III-ի՝ ԲԻԾ-ի յուրաքանչյուր գերակա ոլորտում բոլոր նոր գործողությունների առնվազն 85%-ում գենդերային հավասարությունը որպես կարևոր կամ հիմնական նպատակ ունենալու նպատակին հասնելու համար ԲԻԾ-ի և GAP III-ի համապատասխան թեմատիկ ներգրավվածության ոլորտների նպատակները, խնդիրները և ցուցիչները կօգտագործվեն Տարեկան Գործողությունների Ծրագրերի (ԱԳԾ) նախագծման, ձևակերպման, իրականացման և մոնիտորինգի և գնահատման համար: Իրականացնող գործընկերներին կտրամադրվի ուղեցույց՝ դրանք ներառելու իրենց առաջարկներում/պայմանագրերում:

Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը կարևոր է եղել արդյունավետ բարեփոխումներ ապահովելու համար, քանի որ այն աջակցել է Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարությանը: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կներգրավվեն ԵՄ գործողությունների նախագծման, իրականացման և մոնիտորինգի մեջ: ԲԻԾ-ի առաջնահերթություններից է ՔՀԿ-ների կարողությունների զարգացումը ԵՄ Գենդերային գործողությունների ծրագրի դրույթների իրականացման գործում:

Քաղաքացիական հասարակությանն ի շահ ԵՄԻԾ-ով նախատեսված միջոցառումները կուղեկցեն բոլոր առաջնահերթ ոլորտները այն գիտակցությամբ, որ լիովին ժողովրդավարական, բաց և ներառական հասարակությունը պահանջում է քաղաքացիական ներգրավվածություն և բոլոր դերակատարների համագործակցություն, որտեղ քաղաքացիական հասարակությունն ու անկախ լրատվամիջոցները կատարում են դրական փոփոխությունների խթանման և հանրային վերահսկողության դերը: ԵՄԻԾ-ը նաև կկենտրոնանա Հայաստանում ԵՄ-Քաղաքացիական հասարակություն ճանապարհային քարտեզի՝ 2021-2027թթ. առաջնահերթությունների վրա, որոնք ներառում են մարդու իրավունքների օրակարգի, ժողովրդավարացման, քաղաքականության մոնիտորինգ և երկխոսություն, ՀԸՀՊ-ի իրականացման մոնիտորինգ, քաղաքացիների ներգրավվածության կարողություններ և ՔՀԿ-ների ավելի մեծ կայունություն՝ աջակցելով գենդերային հավասարությանը, երիտասարդությանը, առավել խոցելի խմբերին և ներառական ու հանդուրժող հասարակության կերտմանը, կայունությանը, շրջակա միջավայրի և կլիմայական հարցերում ներգրավվածությանը:

3. Գենդերային հավասարությանն ու կանանց զորեղացմանն աջակցող նպատակային գործողություններ

G2-ի[6] գործողության ընդհանուր նպատակն է լինելու ապահովել՝ (I) ազատություն գենդերային բռնության բոլոր ձևերից, (II) ամրապնդել տնտեսական և սոցիալական իրավունքները, (III) և հզորացնել աղջիկներին ու կանանց և առաջ մղել հավասար մասնակցություն ու առաջնորդություն:

Ազգային մակարդակում գործողությունն աջակցություն կտրամադրի խորհրդարանին և կառավարությանը՝ ընդունելու և իրականացնելու ընտրված ոլորտներում գենդերային փոխակերպող օրենքներ, քաղաքականություններ և բյուջեներ՝ հետևյալ կերպ.

- Բարեփոխել և ամրապնդել գենդերային մեխանիզմը օրենքներում և ոլորտային քաղաքականություններում գենդերային հավասարության հիմնախնդրի համալիր մոտեցման (մեյնսթրիմինգի) համար՝ սկսելով զբաղվածության (վարձատրության գենդերային խզվածք, աշխատատեղերի հավասար հասանելիություն, ֆինանսների և խնամքի ծառայություններին հասանելիություն), կրթության, թվայնացման և ենթակառուցվածքների ոլորտներից:
- Աջակցություն կառավարությանը՝ ընդունելու գենդերային առումով պատասխանատու կառավարման մեխանիզմներ և սկզբունքներ:
- Հասարակական արդար ֆինանսավորման և հաշվետվողականության առաջխաղացում գենդերային համապատասխան բյուջետավորման միջոցով:
- Աջակցություն արդար և ներառական հասարակության զարգացմանը՝ կառավարության փաստահեն, պատասխանատու, մասնակցային, ներառական քաղաքականությունների զարգացման և անապահով խմբերի կենսապայմանները բարելավելու միջոցով:

Տեղական մակարդակում գործողություններն ուղղված կլինեն տեղական/մարզային իշխանությունների կարողությունների զարգացմանը և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, կոալիցիաներին, համայնքների կանանց և երիտասարդներին զորեղացնելուն՝ նրանց ներգրավելու տեղական մակարդակում գենդերային հավասարության հիմնախնդրի համալիր մոտեցման (մեյնսթրիմինգի) մեջ.

- Հետհամավարակային և հետպատերազմական տնտեսական վերականգնման, կլիմայի կայունության և կանանց ներգրավման ուժեղացում տեղական զարգացման մեջ:
- Գենդերային առումով արդար տեղական կառավարման մեջ երիտասարդների քաղաքացիական ակտիվության խթանում և տեղական կին առաջնորդների զորեղացում՝ գործելու որպես փոփոխության գործակալներ:
- Գենդերային խտրականությունից և բռնությունից պաշտպանության բարելավում՝ իրավաբանական ծառայություններից օգտվելու և վերապրողակենտրոն մոտեցման միջոցով:

[6] Սահմանվում են որպես G2 գործողություններ՝ համահունչ ՏՀԶԿ գենդերային G2-ի ցուցիչին: Այս գործողությունները պետք է ուղղված լինեն գենդերային վնասակար նորմերի և կարծրատիպերի դեմ ուղղված երկարատև փոփոխությունների հասնելուն՝ կիրառելով համապարփակ և գենդերային փոխակերպող մոտեցում:

- Տեղական իշխանությունների կարողությունների զարգացում՝ փաստահենք բռնության կանխարգելման ծրագրերի տվյալների ըմբռնման և օգտագործման համար:
- Աջակցություն տեղական ՔՀԿ-ներին GAP III-ի արդյունավետ իրականացման և Հայաստանի կառավարությանը տրվող ԵՄ աջակցության մոնիտորինգում:

Գործողությունների ծրագիրը կանդրադառնա գենդերային անհավասարության արմատական պատճառներին և կկիրառի գենդերային փոխակերպող, իրավունքահեն ու փոխհատվող մոտեցում և կարագացնի առաջընթացը դեպի գլոբալ նպատակներ՝ ներառյալ Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ), որոնք 2030թ. օրակարգի առանցքում են:

Ներգրավվածության յուրաքանչյուր ոլորտի հատուկ ցուցիչներ

Ներգրավվածության ոլորտ I - ազատություն գենդերային բռնության բոլոր ձևերից[7]

- Որքանով է մշակվել, ամրապնդվել և/կամ իրականացվել օրենսդրությունը և/կամ քաղաքականությունը, որն արգելում է գենդերային բռնությունը/անդրադառնում է դրան:
- Բռնություն (սեռական և գենդերային բռնություն) վերապրածների համամասնությունը նախորդ 12 ամիսների ընթացքում, ովքեր հայտնել են բռնության ենթարկված լինելու մասին իրավասու մարմիններին կամ վեճերի կարգավորման այլ պաշտոնապես ճանաչված մեխանիզմներին՝ ըստ սեռի:
- Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների, ինքնավար հասարակական շարժումների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համամասնությունը՝ ներառյալ երիտասարդները և խմբերը, որոնք բախվում են գործընկեր երկրում խտրականության/մարգինալացման փոխհատվող ձևերի, հաղորդում են, որ ունեն ավելի մեծ ազդեցություն և գործառնություն՝ աշխատելու գենդերային բռնությանը վերջ դնելու ուղղությամբ:

Ներգրավվածության ոլորտ II - Սոցիալ-տնտեսական իրավունքների ուժեղացում

- Որքանով են կրթության միջոցով վիճարկվում գենդերային նորմերը՝ կապված կանանց և տղամարդկանց սոցիալական դերերի, կանանց չվճարվող խնամքի աշխատանքի, «կանացի» և «տղամարդկային» աշխատանքի հետ:
- Կառավարության նախաձեռնությունների միջոցով ավելացնել կառավարման և առաջնորդության բարձր հմտություններ ունեցող կանանց թիվը (ըստ ոլորտների՝ պետական/մասնավոր):
- Որքանով են կառավարության կողմից իրականացվում համապատասխան քաղաքականություններ և միջոցառումներ՝ բարելավելու կանանց և աղջիկների հասանելիությունը ներառական և որակյալ կրթությանը՝ ներառյալ գիտության,

[7] 2022 թվականին 1,000,000 եվրո կուղղվի ՔՀԿ-ների կողմից իրականացվող գործողություններին և ծրագրերին՝ կանխելու գենդերային բռնության բոլոր ձևերը (Մարդու իրավունքների և ժողովրդավարության թեմատիկ ծրագիր)

տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (ԳՏՃՄ) ոլորտներում և որակյալ թվային կրթությանն ու ուսուցմանը:

- Որքանով են ապահովված կանանց համար շարունակական կրթության հնարավորությունները, այդ թվում՝ մասնագիտական անցումների համար:

Ներգրավվածության ոլորտ III - Աղջիկների ու կանանց զորեղացում և հավասար մասնակցության ու առաջնորդության զարգացում

- Կանանց զբաղեցրած տեղերի համամասնությունը (ա) ազգային խորհրդարանում և (բ) տեղական ինքնակառավարման մարմիններում:
- Կառավարության կողմից ձեռնարկված բարեփոխումների և կոնկրետ միջոցառումների քանակը՝ իրականացնելու որոշումների կայացմանը կանանց և աղջիկների մասնակցության վերաբերյալ առկա քաղաքականություններով նախատեսված պարտավորությունները:
- Որքանով է կիրառվում գենդերային հավասարության համակարգը պետական և մասնավոր հատվածներում բարձր պաշտոններում կանանց նշանակման և արագացված հավաքագրման համար:
- Որքանով են տեղական և ազգային լրատվամիջոցները վիճարկում խտրական սոցիալական նորմերը և գենդերային կարծրատիպերը կանանց ու աղջիկների մասնակցության և առաջնորդության վերաբերյալ:
- Որքանով են տեղական և ազգային առաջնորդները և ազդեցիկ անձինք՝ ներառյալ ավանդական, կրոնական և համայնքային առաջնորդները, ներգրավվում նախաձեռնություններում՝ մարտահրավեր նետելու և փոխելու սոցիալական նորմերը և խտրական գործելակերպը:

Կարող է նախատեսվել համագործակցություն ԵՄ անդամ երկրների և ՄԱԿ-ի գործակալությունների (ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, ՅՈՒՆԻՍԵՖ, ՄԱԿ-ԿԱՆԱՅՔ և այլն) միջև՝ ներգրավվածության երեք ոլորտներում նշված գործողություններն իրականացնելու համար:

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններին գենդերային հավասարության և կանանց զորեղացման (ԳՀԿԶ) գործողությունների իրականացման համար առաջարկների հայտեր կընդունվեն ամեն տարի տարբեր գործիքների ներքո՝ սկսած 2022 թվականից:

Հատուկ աջակցություն կտրամադրվի ԵՄ-ի և ԵՄ անդամ երկրների կողմից ազգային գենդերային մեխանիզմներին/ցանցերին: Կանանց կազմակերպությունները և գենդերային հավասարության ուղղությամբ աշխատող կազմակերպությունները աջակցություն կստանան քաղաքացիական հասարակության զարգացման, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ժողովրդավարության ու մարդու իրավունքների եվրոպական գործիքի առաջարկների կոչի շրջանակներում:

4. Ներգրավում գենդերային հավասարության և կանանց զորեղացման համար երկխոսության մեջ

Գենդերային հավասարությունը Գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) իրականացման շրջանակներում ԵՄ-ՀՀ կառավարություն հաղորդակցության կարևոր

մասն է: ՀԸԳՀ-ի 85-րդ հոդվածն ընդգծում է հավասար հնարավորությունների և հակախտրականության խթանման կարևորությունը՝ ուղղված գենդերային հավասարության բարձրացմանը և կանանց ու տղամարդկանց միջև հավասար հնարավորությունների ապահովմանը, ինչպես նաև սեռի, ռասայական կամ էթնիկական ծագման, կրոնի կամ համոզմունքի, հաշմանդամության, տարիքի կամ սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դեմ պայքարին: ԵՄ-ն նաև ամենամյա քաղաքական երկխոսություն է վարում ՀՀ-ի հետ, որի օրակարգում է նաև գենդերային հավասարությունը:

ԵՄ-ն նաև աշխատելու է քաղաքացիական հասարակության համար բարենպաստ միջավայրի բարելավման ուղղությամբ: Սահմանված է ՔՀԿ-ների մասնակցության ավելացում կլիմայի փոփոխության, երիտասարդների ներգրավման, մարգինալացված համայնքների կյանքի վրա ՔՈՎԻԴ-19-ի ազդեցության, որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցության, գենդերային բռնության դեմ պայքարի և փխրուն ու պատերազմից տուժած համայնքներում ռիսկերի ու խոցելիության նվազեցման հարցերում՝ որպես առաջնահերթ ցուցիչ:

Գործողությունների արդյունքները չափվելու են վերապատրաստված և ֆինանսական աջակցություն ստացած ՔՀԿ-ների թվով:

«ԵՄ-ն հանուն գենդերային հավասարության. բարեփոխումների օգնության պատուհան» ծրագիրը կանոնավոր աջակցություն է տրամադրում ազգային գենդերային մեխանիզմին՝ խորհրդակցությունների, իրազեկության բարձրացման և կարողությունների զարգացման միջոցառումների միջոցով:

Հետագա կոնկրետ գործողություններ կմշակվեն առաջիկա տարիներին՝ համաձայն ԲԻԾ-ում նշված առաջնահերթ ոլորտների:

5. Իրազեկում և հաղորդակցման/հանրային դիվանագիտության այլ գործողություններ

ԵՄ պատվիրակությունը կարևորում է հիշատակի միջազգային օրերն ու ժամանակաշրջանները, ինչպիսիք են Կանանց միջազգային օրը, Գենդերային բռնության դեմ պայքարի 16-օրյակը՝ սոցիալական ցանցերում իր գրառումներում ընդգծելով հիշատակվող խնդիրների կարևորությունը, տարածելով համապատասխան տեղեկատվական նյութեր, առաքելության ղեկավարի, այլ բարձրաստիճան պաշտոնյաների հարցազրույցներ: ԵՄ ներկայացուցիչները ԵՄ անդամ երկրների հետ միասին մասնակցում են տարբեր մակարդակների միջոցառումների, որոնք ուղղված են գենդերային հավասարությանը և կանանց զորեղացմանը՝ սկսած ամենամյա Կանանց միջազգային կոնգրեսին բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությունից մինչև ԵՄ կողմից ֆինանսավորվող դրամաշնորհների կին ակտիվիստների համար կազմակերպված տեղական դասընթացները:

ԵՄ պատվիրակությունը նաև հանդես է գալիս դեմարշներով՝ կապված Մարդու իրավունքների խորհրդի նիստերի և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի (Միավորված ազգերի կազմակերպության ընդհանուր գործերի) հետ, որտեղ գենդերային խնդիրները և կանանց զորեղացումը ներառված են որպես ԵՄ առաջնահերթություններ:

Ծրագրի մակարդակում հանրային իրազեկումը կազմակերպվելու է ՄԱԿ-ի գործակալությունների կողմից իրականացվող տարածաշրջանային կամ երկկողմանի ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև տարբեր առաջարկների և առաջիկա ազգային նախագծերի շրջանակներում ՀԿ-ներին տրամադրվող դրամաշնորհներով: Վերոնշյալ գործողությունների հաղորդակցման ռազմավարությունները նախատեսում են կանոնավոր երկխոսություն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, թիրախավորված մեդիա և սոցիալական մեդիա արշավներ, մասնակցություն տարբեր ոլորտային միջոցառումներին, գովազդային նյութերի բաշխում, մրցույթներ և այլն: Մեկ այլ տարածաշրջանային նախաձեռնություն՝ «ԵՄ-ն հանուն գենդերային հավասարության բարեփոխումների պատուհանը» պահպանում է կանոնավոր հաղորդակցություն պետական պաշտոնյաների հետ՝ նրանց տրամադրելով փորձաքննություն և կանոնավոր թարմացումներ ԵՄ գենդերային հավասարության գործողությունների և չափանիշների վերաբերյալ:

6. GAP III-ի իրականացմանն աջակցող տեխնիկական միջոցներ և/կամ ֆինանսական ռեսուրսներ

«ԵՄ-ն հանուն գենդերային հավասարության. բարեփոխումների օգնության պատուհան» ծրագիրը կօգտագործվի Հայաստանի կառավարության գործընկերներին հետագա խորհրդատվություններ և վերապատրաստումներ տրամադրելու, ինչպես նաև Բազմամյա ինդիկատիվ ծրագրի (ԲԻԾ) միջոցով ֆինանսավորվող գենդերային ինտեգրման գործողությունների համար: ԵՄ պատվիրակության հաղորդակցության աջակցության ծրագիրը նաև կնպաստի գենդերային հավասարության խթանմանը տեղեկատվական և հաղորդակցական գործունեության միջոցով: